## <u>ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</u>

**ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության 2017թ-ի հիմնական միջոցառումների կատարման վերաբերյալ**

Շիրակի մարզային փրկարարական վարչությունը ղեկավարվելով "Փրկարար ծառայության մասին","Քաղաքացիական պաշտպանության մասին" և "Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին" ՀՀ օրենքներով, ՀՀ Կառավարության և Վարչապետի որոշումներով, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի, Շիրակի մարզպետի որոշումներով և կարգադրություններով, գործելով Շիրակի մարզային փրկարարական վարչության 2017թ. աշխատանքային պլանի՝ իրականացրել է հետևյալ աշխատանքները:

1. <u>Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման, հետևանքների նվազեցման ուղղությամբ պարբերաբար իրականացվում են հետևյալ միջոցառումները.</u>

մշտական հսկողություն է սահմանված՝

ա. մարզի քիմիական վտանգավոր օբյեկտներում առկա ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի և պահպանման նկատմամբ: Մարզում առկա են թվով 2 քիմիական վտանգավոր օբյեկտներ ,ԱԼԵՔՍ ՀՈԼԴԻՆԳԵ ՍՊԸ՝ Գյումրու նախկին ,Կեչորե ՍՊԸ և ,Գյումրի գարեջուրե ՍՊԸ-ն, որտեղ պահպանվում և օգտագործվում է ուժեղ ներգործող քիմիական թունավոր նյութ՝ ամոնիակ, քիմիական վտանգավոր նյութերից՝ քլոր է օգտագործում ,Վեոլիա ջուրե ՓԲԸ ,Արևմուտքե տարածաշրջանի տնօրինության ,Շիրակե տեղամասը, ջրամատակարարման և կոյուղու ցանցի վարակազերծման նպատակով: ՈՒՆԹՆ-ի քանակի վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ,

բ. մարզի քիմիական վտանգավոր օբյեկտի անվտանգության վկայագրում ընդգրկված ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ և յուրաքանչյուր կիսամյակ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվում տեղեկություններ կատարված միջոցառումների (ջրային փականների վերանորոգման, ամոնիակային կոմպրեսորի պրոֆիլակտիկ զննման, ճնշման տակ աշխատող փականների ստուգման, կոնդենսատորի խողովակաշարերի կրային նստվածքներից մաքրման աշխատանքների) վերաբերյալ:

Մարզում համաճարակային իրավիճակը բնակչության շրջանում և անասնահամաճարակային իրավիճակը հաշվետու ժամանակահատվածում եղել է հանդարտ եւ վերահսկելի, իսկ օդի աղտոտվածությունը, միջինը՝ կազմել է 0.26մլգ./մ$^3$, ճառագայթային ֆոնը, միջինը՝ 15մկռ./ժ.:

Մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի նկատմամբ մշտական հսկողությունը իրականացնում են ՃՔՄԻՄՀ համակարգում ընդգրկված թվով 5 կազմակերպությունները և նրանց կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները յուրաքանչյուր ուրբաթ ներկայացվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն:

ՀՀ ԱԻՆ ՓԾ ՖՏՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ և ենթակակա ստորաբաժանումների աշխատակիցների վերաբերյալ սահմանված ձևին համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեների մասին տեղեկատվության բնօրինակը՝ յուրաքանչյուր աշխատակցի ստորագրությամբ:

Ի կատարումն ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի 22.08.2017թ-ի N 7/01.4/9339-17 հանձնարարականի՝ էլեկտրոնային շտեմարանում տվյալների հավաքագրման, շտեմարանների ձևավորման և վարման նպատակով՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՖՏՎ սոցիալական ապահովման հարցերի բաժին է ներկայացվել Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի տվյալները՝ ըստ պահանջվող ձևաչափի:

ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ մարզի ՃՔՄԻՄՀ համակարգում ընդգրկված կազմակերպությունների գործունեության ոլորտների և տեխնիկական հագեցվածության վերաբերյալ:

Ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 20.01.2017թ-ի N 17/59 հրամանով հաստատված շտապ զեկույցների հաշվետախտակի ձևերի, ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզի թվով 79 համայնքների անձնագրերը՝ ձև 48-ը և տվյալներ շենքերի և շինությունների վերաբերյալ ձև 49-ը էլ.տարբերակով,

ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել 2017թվականի ընթացքում ՀՀ Շիրակի ՄՓՎ կողմից ԱՌՆ ոլորտի ուղղությամբ կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 20.01.2017թ. N 17/59 հրամանի պահանջի՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի ,Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասինե թիվ 1582-Ն որոշմամբ ստեղծված ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովների կազմած ակտերի վերաբերյալ, համաձայն շտապ զեկույցների հաշվետախտակի ձև 65-ի:
Ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 10.11.2017թ. N 17.4/12988-17 հանձնարարականի 1 և 2 կետերի պահանջի՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկատվություն Շիրակի մարզի տարածքում լանջերի քայքայման հետևանքով հիմնական (միջպետական և հանրապետական նշանակության) և երկրորդական՝ կենսական նշանակության ցանցերին սպառնացող քարաթափման տեղամասերի վերաբերյալ:

2.Քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ՝
1) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ.
ա. համաձայն շտապ զեկույցների հաշվետախտակի ձևերի, ՀՀ ԱԻՆ ՓԾ ՔՊ վարչություն է ներկայացվել՝
տեղեկություններ մարզի կազմակերպություններում առկա ՔՊ գույքի վերաբերյալ:
տեղեկություններ ՔՊ զորահավաքային պահուստի գույքի գույքագրման վերաբերյալ:
ամփոփագիր մարզի ՔՊ կազմավորումների, դրանց անձնակազմի թվաքանակի և հագեցվածության վերաբերյալ:
տեղեկություններ մարզում առկա ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների վերաբերյալ,
բ. ճշգրտվել են տեղեկությունները մարզում առկա ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ավտոմոբիլային ճանապարհների և դրանք սպասարկող կազմակերպությունների, էլեկտրահաղորդման ցանցերի և գծերի, գազամատակարարման գծերի և օբյեկտների, առկա ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և կառուցվածքների վերաբերյալ,
գ. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հանձնարարականի պահանջի ՀՀ ԱԻՆ ՓԾ ԹՆԱՎ է ներկայացվել տեղեկատվություն Շիրակի մարզի ուսումնական նպատակով դպրոցներին և մանկապարտեզներին անհրաժեշտ ПДФ տիպի մանկական հակագազերի և КЗД-4, КЗД-6 խցիկների պահանջարկի վերաբերյալ:
դ. ղեկավարվելով ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի ,Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003թ. - ի հունվարի 30-ի N 134–Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասինե N 46-Ն որոշման հավելված N 1-ի I-ին գլխի 2-րդ կետի և III-րդ գլխի 6-րդ կետի 7) և 8) ենթակետերի դրույթներով և համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 18.01.2017 թվականի N10 որոշումով հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017թվականի հիմնական միջոցառումների պլանի 8-րդ կետի, սույն թվականի մարտի 23-ին, հունիսի 26-ին, սեպտեմբերի 26–ին և դեկտեմբերի 25-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում Շիրակի մարզային փրկարարական վարչության ԲՊ բաժնի պետ – վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ՝ Լ.Հովսեփյանի և ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ՝ Յու.Հակոբյանի կողմից անցկացվել է հրամանատարական պատրաստության պարապմունք – դասախոսություն՝ ,ՔՊ պլաններին ներկայացվող հիմնական պահանջները, դրանց մշակման, համաձայնեցման և հաստատման կարգըե, ,Քաղաքացիական պաշտպանության մասինե ՀՀ օրենքը և ,ՔՊ դերը երկրի պաշտպանության միջոցառումների ընդհանուր համակարգում, ՔՊ ղեկավարումը ՀՀ-ումե, ,ՔՊ ծառայությունների, կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգըե, ,ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասինե ՀՀ օրենքը, ,ՔՊ կազմավորումների ուսուցումըե, ,ԱԻ-ում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգըե, ,ՔՊ համակարգի պատրաստականության բերման կարգն ու միջոցառումներըե, ,Կազմակերպությունների (տնտեսության օբյեկտների) գործունեության կայունության բարձրացման հիմնական ուղիները: Տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի փաստաթղթերն ու դրանց մշակման կարգըե, ,Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը, տարահանման մարմինները, դրանց կառուցվածքն ու խնդիրներըե, ,ՔՊ ինժեներատեխնիկական միջոցառումների ապահովումըե, ,Տարահանված բնակչության կենսապահովման կազմակերպումըե, ,ՀՀ տարածքում ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության դեպքում

բնակչության ազդարարումն ու տեղեկատվության տրամադրման կարգը: Բնակչության գործողությունները ազդարարման ազդանշաններովե թեմաներով: Պարապմունքին ներկա են եղել մարզային թվով 11 ՔՊ ծառայությունների շտաբի պետերը:

2) քաղաքացիական պաշտպանության պլանների և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցերի վերաբերյալ.

ա. քաղաքացիական պաշտպանության պլանների և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցերի մշակման ուղղությամբ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՇՄՓՎ կողմից մեթոդական օգնության ցուցաբերման մասին.

ՇՄՓՎ կողմից մարզային թվով 11 ՔՊ ծառայությունների պետերին մեթոդական օգնություն է ցուցաբերվել ծառայությունների կանոնադրությունների և պլանների լրամշակման ուղղությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետի 29.09.2017թ.-ի N 282-Ա որոշմամբ հաստատվել է մարզային թվով 11 ՔՊ ծառայությունների կանոնադրությունները,

մարզի թվով 79 համայնքների ղեկավարներին, համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանների, ինչպես նաև թվով 140 դպրոցների և թվով 34 բուժ. հիմնարկների պատասխանատուներին քաղաքացիական պաշտպանության պլանների և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցերի մշակման ուղղությամբ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՇՄՓՎ կողմից ցուցաբերվել է մեթոդական օգնություն:

բ. ՀՀ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից քաղաքացիական պաշտպանության պլանների և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցերի մշակման և ճշգրտման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:

Ճշգրտվել են մարզի թվով 79 համայնքների քաղաքացիական պաշտպանության պլաններ, ինչպես նաև թվով 140 դպրոցների և թվով 34 բուժ. հիմնարկների քաղաքացիական պաշտպանության պլաններ և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցեր,

համաձայն ՇՄՓՎ տարեկան միջոցառումների պլանի ճշգրտվել և ՀՀ Շիրակի մարզպետի հաստատմանն է ներկայացվել մարզի ՔՊ պլանը:

ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի 01.09.2017թ. N 976 հրամանի՝ 2017թվականի օգոստոսի 15-ից – 17-ը ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչությունում և ենթակա ստորաբաժանումներում իրականացված մեթոդական, մասնագիտական օգնության ցուցաբերման և համալիր (կոմպլեքս) ստուգման ընթացքում հայտնաբերված բացթողումների և թերությունների վերացման պլան-ժամակակացույցի 6,8,9,12,16 և 17 կետերով նշված թերությունները սահմանված կարգով վերացվել են և զեկուցվել՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին:

ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հանձնարարականի պահանջի՝ 2018 թվականին Շիրակի մարզում քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումները պատշաճ մակարդակով պլանավորելու նպատակով, Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ՝ Լ.Հովսեփյանը մասնակցել է սույն թվականին դեկտեմբերի 15-ին անցկացված ՀՀ ԱԻՆ թիվ 2 մասնաշենքի դահլիճում սեմինար-պարապմունքին:

ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ 2017թ-ի միջոցառումների աշխատանքային պլանի՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՔՊ վարչություն է ներկայացվել 2017թ-ի 1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում Շիրակի մարզի տարածքում առկա թվով 32 ապաստարանների և թվով 7 հակաճառագայթային թաքստոցների պահպանության վիճակի ուսումնասիրությանների վերաբերյալ տեղեկություններ:

3. <u>Բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման ուղղությամբ՝</u>

1) տարերային և տեխնածին վտանգների ուսումնասիրման ու կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ.

ա. ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Շիրակի մարզում գտնվող ջրամբարների վերաբերյալ,

բ. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 13.02.2017թ-ի N 1473-17 հանձնարարական պահանջի ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Շիրակի մարզում ՀՀ պետական սահմանի մոտ հնարավոր գարնանային վարարումների վտանգավոր տեղամասերի, Ախուրյան գետի ավազանի՝ Առափի, Ազատան, Երազգավորս, Բայանդուր համայնքների մոտ, ինչպես նաև Արփի լճի ջրամբարի փլուզման դեպքում սահմանային հատվածում ջրածածկման հավանական տարածքների վերաբերյալ,

գ. ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի 14.03.2017թ-ի N 1/17.1/2602-17 հանձնարարական պահանջի՝ 2017թ-ի մարտ ամսվա ընթացքում Շիրակի ՄՓՎ և Արթիկի քաղաքապետարանի մասնագետների մասնակցությամբ ուսումնասիրվել է Արթիկ քաղաքի տարածքով անցնող ,Մովրովենցե և ,Բմբուլենցե քանդված հեղեղատարերը, ինչպես նաև Շիրակի ՄՓՎ ԲՊ մասնագետների և Կապսի ջրամբարի պետի մասնակցությամբ ուսումնասիրվել է Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքային և ելքային տեղամասերը, ճշգրտված տվյալները նեկայացվել են ԲՊԱՀՎԿ վարչություն,

դ. համաձայն շտապ զեկույցների հաշվետախտակի ձև 64-ի ՀՀ ԱԻՆ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ ՀՀ Շիրակի մարզի տարածքում համայնքային բյուջեներով նախատեսված 2017 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքներում, ինչպես նաև Ախուրյանի, Անիի, Արթիկի, Ամասիայի, Աշոցքի տարածաշրջանների թվով 42 համայնքներում հեղեղավտանգ ժամանակահատվածում իրականացնել են սելավատարների հուների մաքրման աշխատանքներ 20570մ երկարությամբ`ծախսվել է 3մլն 780 հազար դրամ,

ե. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 07.08.2017թ-ի N 01/10180-17 հանձնարարականի ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին զեկուցագիր է ուղարկվել 25.07.2017թ-ին ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտ համայնքի՝ ,Լեռնակերտի միջնակարգ դպրոցե ՊՈԱԿ-ի տանիքի՝ ուժեղ քամու հետևանքով վնասվածության վերաբերյալ,

զ. ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, փ/ծ գեներալ-մայոր՝ Վ.Գաբրիելյանին զեկուցագիր է ուղարկվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 14.07.2017թ-ին անցկացված ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքում (համայնքապետարանի շենքում) ,Աշոցքի տարածաշրջանում համաճարակի դեպքում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը և վերացմանն ուղված միջոցառումներըե թեմայով ՇՈՒ–ին մասնակցությանը՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ համապատասխան ներկայացուցիչների վերաբերյալ,

է. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 30.11.2017թ-ի N 17.5/295142-17 հանձնարարականի պահանջի՝ սույն թվականի դեկտեմբերի 12-ից – 14 – ը ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության խորհրդակցությունների դահլիճում՝ Շիրակի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր՝ Ա.Պետրոսյանի, Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի, ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր՝ Ս.Գրիգորյանի և Շիրակի ՄՓՎ Ախուրյանի թիվ 53 ՀՓՋ-ի հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր՝ Հ.Սերոբյանի կողմից՝ ,Գյումրու պետական բժշկական քոլեջե ՊՈԱԿ-ի ուսանողների հետ անցկացվել է դասընթացներ հետևյալ թեմաներով՝ ,Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերե, ,Առաջին օգնությունե, ,Հրդեհաշիջման սկզբնական միջոցներե, ,Հրդեհի ժամանակ բնակչության վարքականոններե, ,Կլլվող և ներարկվող թունավորումներե, ,Անվտանգությունը կենցաղումե և ,Արշավների անվտանգ կազմակերպումե,

ը. ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի 05.12.2017թ-ի N 1489 հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետի ա և բ կետերի պահանջների, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին ներկայացվել է զեկուցագիր

տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարման գործընթացներում ներգրավված մարզի համայնքների ղեկավարներին և ԱԻ գծով պատասխանատուներին աջակցություն և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով, Շիրակի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումների անձնակազմի հետ, Շիրակի ՄՓՎ մասնագետների կողմից 2017թ-ի դեկտեմբերի 20-ին Շիրակի ՄՓՎ խորհրդակցությունների դահլիճում կազմակերպվել և անցկացվել է <<Աղետների ռիսկի կառավարումը տեղական մակարդակներում>> կիրառական ուղեցույցի ուսուցման վերաբերյալ,

թ. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 11.10.2017թ-ի N 13568-17 հանձնարարականի պահանջի և համաձայն ք.Գյումրի Կոմիտասի փողոց 3-րդ փակուղի 1-ին տան բնակչուհի Վերա Հակոբյանի կողմից գրված դիմում-բողոքի՝ կապված Գյումրու ,Հին օդանավակայանե թաղամասում սույն թվականի հոկտեմբերի 11-ին տեղի ունեցած ջրագծի վթարի հետ, վթարի վերականգման մասին սահմանված կարգով զեկուցվել է ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին,

ժ. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 25.07.2017թ-ի N 31/271606-17 հանձնարարականի սույն թվականի հուլիսի 27 – ից – 28 –ը Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ՝ Լ.Հովսեփյանը համայնքների ԱՌՆ պլանի և ՏՄՌԿ ուղեցույցի ներդրման նպատակով մասնակցել է Հանքավանի ,Անի ռեզորթե հյուրանոցային համալիրում անցկացվող երկօրյա վերապատրաստման դասընթացներին,

ժա. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 10.11.2017թ-ի N 17/17.4/13137-17 հանձնարարականի պահանջի՝ Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի կողմից վերանայվել, ճշգրտվել և Շիրակի մարզպետի կողմից 20.12.2017թ-ի N 370-Ա որոշմամբ հաստատված ,Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանությանե պլանի N 2 հավելվածը՝ ,Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում մարզի բնակչության պաշտպանության պլանե -ը,

ժբ. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 23.05.2017թ-ի N 01/6114-17 հանձնարարականի պահանջի ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին է ներկայացվել տեղեկատվություն՝ ,Մաքուր Հայաստանե գործողությունների ծրագրի շրջանակներում 27.05.2017թ-ին Շիրակի ՄՓՎ և ենթական ստորաբաժանումների կողմից Շիրակի ՄՓՎ և ՀՓՋ-ների տարածքներում, տարածքներին հարակից ճանապարհների շրջակայքում և հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում իրականացված մաքրման, աղբահանության, ծառատնկման, կանաչապատման և բարեկարգման աշխատանքների վերաբերյալ:

2) Միջազգային համագործակցության ուղղությունների վերաբերյալ.

ա. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 20.01.2017թ-ի N 17/59 հրամանով հաստատված շտապ զեկույցների հաշվետախտակի ձև 62-ի ՀՀ ԱԻՆ ՓԾ ԾԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ 2017թ-ի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված տարբեր ծրագրերի և Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի աշխատակիցների կողմից կատարված աշխատանքներին ցուցաբերած մասնակցության վերաբերյալ,
բ. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 20.01.2017թ-ի N 17/59 հրամանով հաստատված շտապ զեկույցների հաշվետախտակի ձև 56-ի, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, փ/ծ գեներալ-մայոր՝ Վ.Գաբրիելյանին ներկայացվել է հաշվետվություն՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ՓԾ Շիրակի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ–վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ՝ Լ.Հովսեփյանի Շվեյցարիայի համադաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ,
գ. ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 09.10.2017թ. N 17/17.1/11318-17 հանձնարարականի՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԾԿՎ է ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության առաջարկությունը՝ ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումնեի ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

3) արտակարգ իրավիճակներում գործելու (աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու) պլանների վերաբերյալ.

ա. պլանների մշակման ուղղությամբ իրավական բազայի կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին՝
ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի 08.08.2017թ.-ի N 1/17.4/[274600]-17 հանձնարարականի ՇՄՓՎ կողմից առաջարկություններ է ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿՎ ,Համայնքի աղետների ռիսկի կառավարման ծրագրիե հավելված N6-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

բ. ԱՌՆ և ԱԻ պլանների մշակման ուղղությամբ ՇՄՓՎ կողմից մեթոդական օգնության ցուցաբերման մասին՝
համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 06.05.2016թ.-ի N 494-Ա և ՀՀ ԿԳ նախարարի 18.05.2016թ.-ի N 498 –Ա ,Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասինե համատեղ հրամանի ՇՄՓՎ կողմից մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի թվով 150 դպրոցներին ,Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանե-ի մշակման ուղղությամբ,

գ. պլանների մշակման և ճշգրտման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին՝
ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ Շիրակի մարզի ,Ուսումնական հաստատությունների ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլաններիե մշակման ընթացքի վերաբերյալ՝ թվով 142 դպրոցները ավարտել են գործընթացը,
ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի հանձնարարականի պահանջի ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզում գործող թվով 4 ճանապարհաշինարարական, վերականգնման և սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների արտակարգ իրավիճակներում գործելու պլանների վերանայված և ճշգրտված օրինակները էլ.տարբերակով՝ հաստատված 2017թ-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ:

<u>Իրավական, օրենսդրական բազայի կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին.</u>
Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ ՇՄՓՎ 2017թ. տարեկան միջոցառումների աշխատանքային պլանի, ՇՄՓՎ կողմից կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 03.03.2017թ.-ին հաստատվել է ,Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2017 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասինե N 89 - Ա որոշումը:
ՇՄՓՎ կողմից կազմվել է և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է մարզի տարածքում 2017 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիրը, որտեղ համայնքների ղեկավարները ներկայացրել են իրենց կողմից 2017 թվականի ընթացքում իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումները: Համաձայն այդ ծրագրի, հեղեղավտանգ ժամանակահատվածում սելավատարների հուների մաքրման աշխատանքներ են նախատեսել իրականացնել Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքներում, Ախուրյանի, Անիի, Արթիկի, Ամասիայի, Աշոցքի տարածաշրջանների համայնքներում:
ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 15.03.2017թ.-ի Շիրակի մարզպետի N 118 - Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ Շիրակի մարզպետի 06.04.2010թ.-ի ,Քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայություններ ստեղծելու, ծառայությունների պետեր նշանակելու և ՀՀ Շիրակի մարզպետի 16.06.2003թ.-ի N 228 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասինե N 59 - Ա որոշման հավելվածի 10-րդ կետում ,Շիրակ-ջրմուղկոյուղիե ՓԲԸ միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալե բառերը փոխարինվել է ,Վեոլիա ջուրե ՓԲԸ ,Արևմուտքե տարածաշրջանի տնօրինության ,Շիրակե տեղամասի պետե բառերով:

Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 12.03.2017թ. N 124-Ա որոշմամբ հաստատվել է 19.04.2017թ-ին Շիրակի մարզում □Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում տարահանման կազմակերպումը□ թեմայով շտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին որոշումը:
Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 22.05.2017թ. N 215-Ա որոշմամբ հաստատվել է ս.թ. հունիսի 22-ին մարզում ,Կառնուտի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ե թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին որոշումը:
Հաստատվել է 2017թ-ի ,ՀՀ Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասինե ՀՀ Շիրակի մարզպետի 14.06.2017թ-ի N 230–Ա որոշումը:
Կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 20.09.2017թ. N 278-Ա որոշմամբ հաստատվել է 19.10.2017թ-ին Շիրակի մարզում □Հրդեհի օջախի առկայությամբ փլատակում որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը□ թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն անցկացնելու մասին որոշումը:
ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 15.11.2017թ.-ի Շիրակի մարզպետի N 313 - Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ Շիրակի մարզպետի 21.11.2013թ.-ի N 323 – Ա որոշման մեջ:
ՇՄՓՎ կողմից կազմվել է և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է ,2017-2018 թվականների ձմեռային ժամանակահատվածում ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին բնակչության անվտանգ երթևեկությունն ապահովելու միջոցառումների մասինե ՀՀ Շիրակի մարզպետի 27.11.2017թ-ի N 324-Ա որոշումը:
ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 20.12.2017թ.-ի Շիրակի մարզպետի N 370 - Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ Շիրակի մարզպետի ,Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության պլանը հաստատելու և ՀՀ Շիակի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 256-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասինե 13.05.2014թ.-ի N 89 – Ա որոշման մեջ:

5. <u>Ծառայության կազմակերպման ուղղությամբ՝</u>

1) ի կատարումն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 15.02.2013թ. N 17/137 հրամանի պահանջի՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԾԿՎ է ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության 2017թ-ի 1-ին և 2-րդ կիսամյակների կատարողականների գնահատման ակտերը:

6. <u>Թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչություն՝ ձեռք բերված տեխնիկական միջոցների, կնքված պայմանագրերի վերաբերյալ.</u>

Յուրաքանչյուր ուրբաթ ԹՆԱՎ է ներկայացվում ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների մարտական հաշվարկում գտնվող մեքենաների վրա կատարվող վերանորոգման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:
Յուրաքանչյուր ամիս ԹՆԱՎ է ներկայացվում ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների կոմունալ կենցաղային ծախսի մասին տեղեկատվություն:
Յուրաքանչյուր ամիս ԹՆԱՎ է ներկայացվում ՇՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների հատուկ տեխնիկայի և այլ միջոցների շարժի և վառելիքաքսուկային նյութերի ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:
Կազմակերպվել և անցկացվել են Շիրակի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումներում շահագործվող հատուկ, հրշեջ, փրկարարական տեխնիկայի, տեխնիկական զինվածության, փրկարարական սարքերի, ագրեգատների և սարքավորումների փողրակային տնտեսության ուժային փորձարկումներ:
2017 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ ԱԻՆ նախարարի 13.11.2017թվականի N1374 հրամանի Շիրակի ՄՓՎ-ին հատկացվել է փրկարարական գույք սարքավորումներ:
2017 թվականի դեկտեմբերի 30-ի ՀՀ ԱԻՆ նախարարի 13.11.2017թվականի N1374 հրամանի Շիրակի ՄՓՎ Գյումրու թիվ 48 ՀՓՋ-ին հատկացվել է ԿԱՄԱԶ (43253) ԱԲ 3.2 40/4 մակնիշի 250VV01 պ/հ-ի հրշեջ փրկարարական ավտոմեքենան:

7. <u>Կապի և ազդարարման համակարգի կատարելագործման վերաբերյալ.</u>

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 20 հունվարի 2017թ.-ի N17/59 հրամանով հաստատված շտապ զեկույցների հաշվետախտակի ձև 46-ի ՓԾ ՕԿԿ է ներկայացվել տեղեկանք՝ ՀՀ Շիրակի մարզում տեղադրված ազդարարման սարքավորումների առկայության մասին: Ընդամենը ՀՀ Շիրակի մարզին անհրաժեշտ է 165 հատ շչակ, առկա է եռաֆազ Ս-40՝ 41 հատ, որից սարքին 18 հատ, անսարք 23 հատ: Առկա է միաֆազ Ս-40՝ 5 հատ, որից սարքին 4 հատ, անսարք 1 հատ: Առկա է ԼԴ-800՝ 3 հատ, որից սարքին ԼԴ-800 2 հատ, անսարք 1 հատ: 120 համայնքից ազդարարում հնարավոր է իրականացնել 18-ում: Պակասում է 116 շչակ, որից ԼԴ800-116 հատ:
04.05-06.05.2017թ. ՓԾ ՕԿԿ-ի կողմից մարզում տեղադրվել են թվային ռադիոկապի կայաններ, իրականացվել են կապի հաստատման և ստուգման աշխատանքներ: (ՀՀ ԱԻ նախարարի 27.04.17թ. 485-Ա հրաման)
Ենթակա ստորաբաժանումների GPS համակարգերի անխափան աշխատանքները վերահսկվում են համապատասխան վերապատրաստում անցած ՄՓԿ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչների կողմից:

8. <u>Մարզում տեղի ունեցած ԱԻ □դեպքերի □ ուղղությամբ</u>

Մարզում տեղի ունեցած ԱԻ դեպքերի օպերատիվ արձագանքման և հետևանքների մեղմացման աշխատանքների կատարման ժամանակ Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպվել է փոխհամագործակցություն մարզի ՔՊ ծառայությունների, շահագրգիռ կազմակերպությունների և մարզում տեղակայված զին.մասերի հետ:

1□ <u>2017թ. ընթացքում ՄՓԿ ՃԿԿ-ի ստացված զանգերի թիվը կազմել է՝ 80440 զանգ, □նախորդ տարվա նույն ժամանակահատված՝- 85673զանգ□: 2017թ. զանգերի թիվը նվազել է 5233 զանգով կամ 6.1□:</u>

2□ ՀՀ Շիրակի մարզի տարածքում 2017թ.-ի ընթացքում գրանցված տեխնածին, տարերային և սոցիալ-կենցաղային բնույթի արտակարգ դեպքերի և պատահարների վերլուծությունը <u>ներկայացված աղյուսակի տեսքով՝</u>

3□ **<u>Ըստ առաջացման տեղի արձանագրված հրդեհների</u>** համեմատականը 2016թ. նույն ժամանակահատվածի հետ:Հրդեհների թիվը 2017թ-ին կազմել է 320 հրդեհ □ 2016թ. նույն ժամանակահատվածում 312 հրդեհ□: 2017թ-ին գրանցվել է հրդեհների աճ՝ 8 դեպքով կամ 2.6□-ով:
Վերլուծությունը ցույց է տալիս, որ <u>հրդեհների</u> զգալի մասը՝ 163-ը կամ 50.9□-ը □ նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 144-ը կամ 46.2□-ը□ առաջացել են <u>*խոտածածկ տարածքներում*</u>: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 19 դեպքով, կամ 13.2□-ով:
<u>*Բնակելի հատվածում*</u> առաջացել է 63 հրդեհ, կամ 19.7□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 60-ը կամ 19.2□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 3 դեպքով, կամ 5□-ով:
<u>*Անասնակեր □խոտի դեզ և այլն□*</u> հատվածում առաջացել է 20 հրդեհ, կամ 6.3□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 23-ը կամ 7.4□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը նվազել է 3 դեպքով, կամ 13□-ով:
<u>*Տրանսպորտային միջոցներում*</u> առաջացել է 17 հրդեհ, կամ 5.3□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 14-ը կամ 4.5□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 3 դեպքով, կամ 21.4□-ով:
<u>*Այլ օբյեկտներում*</u> առաջացել է 15 հրդեհ, կամ 4.7□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 8-ը կամ 2.6□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 7 դեպքով, կամ 87.5□-ով:
<u>*Անասնապահական շինություններում*</u> առաջացել է 14 հրդեհ, կամ 4.4□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 7-ը կամ 2.2□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 7 դեպքով, կամ 100□-ով:
<u>*Բուսածածկ տարածքներում*</u> առաջացել է 9 հրդեհ, կամ 2.8□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 33-ը կամ 10.6□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը նվազել է 24 դեպքով, կամ 72.7□-ով:

*Փողոցում և այլ տեղերում □կուտակված աղբ□* առաջացել է 5 հրդեհ, կամ 1.6□-ը,□ նախորդ տարվա նույն ժամանակահատված` 12-ը կամ 3.9□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը նվազել է 7 դեպքով, կամ 58.3□-ով:
*Առևտրի օբյեկտներում* առաջացել է 3 հրդեհ, կամ 1□-ը,□ նախորդ տարվա նույն ժամանակահատված` 1-ը կամ 0.3□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 2 դեպքով, կամ 200□-ով:
*Էլ.վահանակներում* առաջացել է 3 հրդեհ, կամ 1□-ը,□ նախորդ տարվա նույն ժամանակահատված` 5-ը կամ 1.6□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը նվազել է 2 դեպքով, կամ 40□-ով:
*Կրթական և մշակութային հաստատություններում* առաջացել է 3 հրդեհ, կամ 1□-ը,□ նախորդ տարվա նույն ժամանակահատված` 2-ը կամ 0.6□-ը□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 1 դեպքով, կամ 50□-ով:
*Կազմակերպություններում* առաջացել է 2 հրդեհ, կամ 0.7□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հրդեհ չի արձանագրվել□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 2 դեպքով, կամ 200□-ով:
*Սպասարկման օբյեկտներում* առաջացել է 2 հրդեհ, կամ 0.7□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հրդեհ չի արձանագրվել□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 2 դեպքով, կամ 200□-ով:
*Պետական կառավարման, ՏԻՄ վարչական շենքերում* առաջացել է 1 հրդեհ, կամ 0.3□-ը, □ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հրդեհ չի արձանագրվել□: 2016թ. համեմատ այս ցուցանիշը աճել է 1 դեպքով, կամ 100□-ով:
2017թ-ին *անտառներում* հրդեհ չի գրանցվել,□ նախորդ տարվա նույն ժամանակահատված` 2-ը կամ 0.6□-ը□:2016թ. համեմատ այս ցուցանիշը նվազել է 2 դեպքով, կամ 200□-ով:

***Չարձագանքված հրդեհներ***՝

05.04.2017թ.- ք.Գյումրի Մյասնիկյան փող. տուն 48 – հրշեջ մեքենա չի մեկնել.
Այրվել է Գ.Թումանյանին պատկանող տան գազի հաշվիչը:
Հրդեհը հանգեցվել է տեղի ուժերով:
21.04.2017թ.- գ.Քարաբերդ 1-ին փող. տուն 5 – հրշեջ մեքենան ճանապարհից հետ է կանչվել.
Այրվել է Խ.Խաչատրյանին պատկանող տան բակում կուտակված 250 հակ անասնակեր:
Հրդեհը հանգեցվել է տեղի ուժերով:

9.Օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ

Յուրաքանչյուր ամիս կազմվել և ՕԿՎ է ներկայացվել վարչության ամսական աշխատանքային պլանները:
ՕԿՎ է ներկայացվել ամսական հիմնական միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվությունները:
ՕԿՎ է ներկայացվել ամսական ՄՓՎ ենթակա ստորաբաժանումների կողմից իրակա-նացված տրանսպորտային ելքերի վերաբերյալ հաշվետվությունները:
ՕԿՎ պարբերաբար ներկայացվել է ստորաբաժանումների ազդարարման սխեմաները և հավաքի գրաֆիկները:
ՕԿՎ է ներկայացվել աշխատանքային շաբաթների ընթացքում ՄՓՎ կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունները:
Յուրաքանչյուր եռամսյակ ՕԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ աշխատակիցների ճշգրտված հասցեները և հեռախոսահամարները:

Մասնակցություն ՀՀ ԱԻՆ ՓԾ-ի կողմից անկացվող ՀՇՈՒ-ին
